Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

օգոստոս

թիվ 8 (156)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներ, ինչպես նաև «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ին «Շեթաբ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Նորմեդ» ՍՊԸ-ի և Ա/Ջ Սերգեյ Հովսեփյանի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև որոշ բաց և փակ բաժնետիրական ընկերությունների մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները ՓԲԸ-ի, ՍՊԸ-ների և փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 187-Ն որոշումը «Հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 189-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 190-Ն որոշումը «Բանկերի միացման կարգը» հաստատելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 191-Ն որոշումը «Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ը» հաստատելու մասին»

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 192-Ն որոշումը «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը հաստատելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 212-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011 թթ.)» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

41 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** անփոփոխ է թողնվել՝ 8.5% (որոշում թիվ 202Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Յումանիլայն» և «Մեծ վարկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 214Ա, 218Ա):
- ***«Շեթաբ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Մելլաթ բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 215Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Նորմեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Ա/Ձ Սերգեյ Հովսեփյանի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 216Ա, 222Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատ բանկ», «Զարգացման հայկական բանկ»՝ բաց և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «էրեբունի», «Գյումրի» և «Արցախ», «Արմենիա», «Բաղրամյան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/904Ա, 1/912Ա, 1/903Ա, 1/913Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 սահմանափակ պատասխանատվությամբ և 1 փակ բաժնետիրական ընկերություններին նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 300000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/928Ա, 1/941Ա) և 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/930Ա, 1/893Ա, 1/944Ա):

*Հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից շրջանառության մեջ դնել հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց՝ առանց ժամկետային սահմանափակումների: Հազար դրամ անվանական արժեքով 1999 և 2001 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը՝ համաձայն Հավելված 1-ի:

4. Հաստատել հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նկարագրությունը՝ համաձայն Հավելված 2-ի:

5. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությանը հրապարակել համապատասխան հաղորդագրություն մամուլում՝ ընդգրկելով սույն որոշման Հավելված 2-ը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հուլիսի 2011 թ., N 187-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հուլիսի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.2011 թ. (ՀՀԳՏ N21 (404), 1.09.2011):

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 187-Ն որոշմամբ

Հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 187-Ն որոշմամբ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հազար դրամ անվանական արժեքով 2011 թվականի թողարկման
Հայաստանի Հանրապետության թղթադրամի

1000 դրամ անվանական արժեքով 2011 թվականի նմուշի ՀՀ թղթադրամի դիզայնը, պատկերները, գույները և չափերը հիմնականում նույնն են, ինչ որ 1000 դրամ անվանական արժեքով 2001 թվականի նմուշի ՀՀ թղթադրամինը: 1000 դրամ անվանական արժեքով 2011 թվականի նմուշի ՀՀ թղթադրամի չափսերն են՝ 136 x 72 մմ: Թուղթը սպիտակ է, որի վրա անզեն աչքով երևում են թելիկներ: Թղթադրամը պարունակում է եղիշե Չարենցի դիմանկարը պատկերող բազմերանգ ջրանիշ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող հստակ ջրանիշ: Թղթադրամն ունի երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և լուսընդդեմ դիտելիս երևում է հոծ գծի տեսքով: Մյուս պաշտպանական ներգիծը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ կետագծի, իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 1000» մանրատառաշարը: Դիմերեսի հիմնական գույներն են՝ կանաչը և բաց վարդագույնը, իսկ դարձերեսինը՝ կանաչը և մոխրագույնը:

Դիմերես

Թղթադրամի ձախ մասում եղիշե Չարենցի դիմանկարն է: Դիմանկարից ձախ ուղղահայաց գրված է «Եղիշե Չարենց 1897-1937», իսկ ավելի ձախ փակցված է ուղղահայաց կինեգրամայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում է եղիշե Չարենցի աջ կիսադեմը, դրամի խորհրդանշանը՝ «֏», զարդանախշ ու «1000» գրառումը, որոնք դիտման անկյան չնչին փո-

փոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց: Այս պատկերների միջև երևում է «1000» գրառումը, որը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում մեծանում և փոքրանում է (ZOOM էֆեկտ): Փայլաթիթեղի ողջ մակերեսով «AMD» և «1000» մանրատառաշարերն են, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով երևում են «AMD» ապամետաղականացված գրառումները: Փայլաթիթեղի վրա՝ վերևի մասում, հորիզոնական տպագրված է «1000» թիվը: Փայլաթիթեղից ձախ՝ ուղղահայաց, կարմիրով գրված են թղթադրամի սերիան և համարը՝ բաղկացած «ԱԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը):

Դիմանկարի ներքևի ձախ անկյունում պատկերված է ծվածձև զարդանախշ, որտեղ «1000» թվի թաքնված պատկեր է, որը հայտնվում է թղթադրամն աչքի բարձրությամբ լուսընդդեմ դիտելիս՝ դիտման անկյան փոփոխության դեպքում:

Թղթադրամի վերին մասում խորը տպագրությամբ գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ «ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 1000» բառերը և թիվը: Դիմանկարի աջ մասում գրված է Ե. Չարենցի բանաստեղծության «Ես իմ անուշ Հայաստանի Արևահամ բառն եմ սիրում...» բառերը՝ երկու տողով, հետին մասում երևում է Արարատ լեռը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում՝ խորը տպագրությամբ, որից աջ նշված է անվանական արժեքը թվերով՝ նույնպես խորը տպագրությամբ:

Անվանական արժեքից անմիջապես վերև գտնվում է գրչածայրի պատկերը, և գրված է թողարկման տարեթիվը՝ «2011», իսկ աջ եզրին ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»: Դիմանկարից աջ, վերևի կենտրոնական մասում, առկա է մի զարդանախշ, որը լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ համընկնում է դարձերեսի նույն զարդանախշին և կարդացվում են «ՀՀ» տառերը: Զարդանախշի եզրով մանրատառաշարով գրված են «1000 AMD»: Զարդանախշից աջ՝ հորիզոնական, սևով գրված են թղթադրամի սերիան և համարը՝ բաղկացած «ԱԱ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը):

Տկարատեսների համար վերին աջ անկյունում կա շոշափելի մեկ թեք գիծ և մեկ կետ:

Դարձերես

Հիմնական մոտիվը ներկայացնում է հին Երևանից մի պատկեր՝ երկհարկանի շենքի առջևում կանգնած երկձի կառք: Պատկերի վերին մասում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ավելի վերև մանրատառաշարով՝ «ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 1000» բառերը և թիվը: Թղթադրամի աջ մասում ուղղահայաց պատկերված է զարդանախշ, որի վերին մասում գրված է «1000» թիվը:

Թղթադրամի անվանական արժեքը տառերով գրված է ներքևի կենտրոնական մասում: Դրանից ձախ թղթադրամի անվանական արժեքը՝ «1000» թիվը տպագրված է հորիզոնական գծով՝ բաժանված մուգ մանուշակագույնի և կանաչի: Կանաչ մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը կանաչից կարմիր և հակառակը (STEP՝՝):

Թղթադրամի վերևի աջ անկյունում ուղղահայաց գրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Թղթադրամի մեջտեղում մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «1000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»: Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է մանուշակագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով:

1000 դրամ անվանական արժեքով 2001 թվականի և 2011 թվականի նմուշների ՀՀ թղթադրամների տարբերությունները

2011 թվականի նմուշի վրա փոփոխության են ենթարկվել որոշ տարրեր, որոնց նկարագրությունը բերվում է ստորև:

Դիմերես

- Դիմանկարի ներքևի ձախ անկյունում պատկերված ծվածձև զարդանախշը 2001 թվականի նմուշի բազմագույնի փոխարեն 2011 թվականի նմուշում կանաչ է:
- Փոխվել է ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունը:
- Ավելացել է կինեգրամայով ժապավենածև փայլաթիթեղ:
- Փոխվել է թողարկման տարեթիվը. աջ կողմում «2001» թիվը փոխարինվել է «2011» թվով:
- Դիմանկարը փոքրացվել և տեղաշարժվել է մի փոքր աջ:

- Դիմերեսի վերին ձախ անկյունում անվանական արժեքն արտահայտող թիվը տպագրվել է հորիզոնական՝ խորը տպագրությամբ՝ 2001 թվականի նմուշում առկա հորիզոնական օֆսեթի փոխարեն:
- Դիմերեսի ներքևի աջ անկյունում գտնվող անվանական արժեքն արտահայտող թվի վերևում ավելացել է գրչածայրի պատկեր, և թողարկման տարեթիվը տեղաշարժվել է դեպի աջ:
- Դիմերեսի աջ և ձախ եզրերում ավելացվել են դեղին շրջանակներ:
- Դիմերեսի չորս անկյունները սպիտակ են՝ տպագրությունը բացակայում է:

Դարձերես

- Դարձերեսին անվանական արժեքն արտահայտող «1000» թիվը տպագրված է հորիզոնական գծով բաժանված մուգ մանուշակագույնի և կանաչի. կանաչ մասը դիտման անկյան փոփոխության դեպքում փոխում է գույնը կանաչից կարմիր և հակառակը (STEP…):
- «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» գրառումը ձախից տեղափոխվել է վերևի աջ անկյուն:
- Պատուհանաձև պաշտպանական ներգիծը, որը թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ կետագծի, իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, տեղաշարժվել է ձախ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հաշվի առնելով, որ վարկային կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով փոփոխել վարկային կազմակերպության տիպը (խումբը),

նպատակ ունենալով ապահովել վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխության արդյունքում առաջացող վարկային կազմակերպության հաճախորդների շահերի պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը, ինչպես նաև վարկային կազմակերպության բնականոն գործունեությունը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1-րդ, 22.2-րդ հոդվածները, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակեր-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հուլիսի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.2011 թ. (ՀՀԳՏ N21 (404), 1.09.2011):

պությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 13) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 13-ը լրացնել նոր 4.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն կանոնակարգի իմաստով առկա է կամ հնարավոր է վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացում, եթե.

1) վարկային կազմակերպությունը խախտել է կամ կխախտի հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները), կամ

2) վարկային կազմակերպության մոտ հավանական է անվճարունակության հիմքերի առաջացումը:»:

2) Կանոնակարգ 13-ի 13.1-րդ կետը երկրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման նպատակով լիցենզիայի վերաձևակերպման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և այդ փաստաթղթերը Կենտրոնական բանկի հետ համաձայնեցնելու կարգը սահմանված են սույն կանոնակարգի 9.1-րդ գլխով:»:

3) Կանոնակարգ 13-ի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգ 13-ի 20-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) մասնաճյուղ ստեղծելու հիմնավորումը:»:

5) Լրացնել նոր 9.1-րդ գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 9.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԻ (ԽՄԲԻ) ՓՈՓՈԽՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

76.1. Վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման մասին որոշման ընդունման դեպքում, վարկային կազմակերպությունը որոշման ընդունման պահից մեկշաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու մասին միջնորդագիրը՝ համաձայն հավելված 18-ի,

2) վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի որոշումը՝ վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու մասին,

3) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագիրը՝ հաստատված վարկային կազմակերպության բարձրագույն կառավարման մարմնի կողմից, որում պետք է արտացոլված լինեն նաև ծրագրով նախատեսված միջոցառումների, գործողությունների և ժամկետների տնտեսագիտական և կառավարչական հիմնավորումները՝ համաձայն հավելված 19-ի,

4) վարկային կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի և եկամուտների ու ծախսերի վերաբերյալ հաշվետվության կանխատեսումները՝ կազմված վարկային կազմակերպության հայեցողությամբ շաբաթական, ամսական, եռամսյակային կտրվածքով՝ ըստ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նախատեսված միջոցառումների, գործողությունների և ժամկետների, իսկ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նախատեսված չլինելու դեպքում՝ առնվազն Կենտրոնական բանկի կողմից սույն կետում նշված միջնորդագրի համաձայնության վերաբերյալ որոշման ընդունման դեպքում կանոնադրության փոփոխությունները և պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու՝ վարկային կազմակերպության կողմից նշված վերջնաժամկետի դրությամբ,

5) վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու նպատակով սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերն այն դեպքում, երբ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով վարկային կազմակերպությունը նախատեսում է փոփոխություններ կատարել իր նշանակալից մասնակիցների կազմում և (կամ) կառուցվածքում,

6) տեղեկանք վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու վերաբերյալ վարկային կազմակերպության պարտատերերի և պարտապանների համաձայնության (դիրքորոշման) առկայության վերաբերյալ (օրենսդրությամբ կամ պայմանագրով պահանջվելու դեպքերում և առկայության դեպքում), իսկ վարկային կազմակերպության պահանջի զիջման կամ պարտքի փոխանցման գործարք նախատեսելու դեպքում՝ տեղեկանք վարկային կազմակերպության պարտատերերի (պարտապանների) պահանջը զիջելու (պարտքը փոխանցելու) վերաբերյալ վարկային կազմակերպության պարտատերերի և պարտապանների համաձայնության (դիրքորոշման) վերաբերյալ (օրենսդրությամբ կամ պայմանագրով պահանջվելու

դեպքերում և առկայության դեպքում): Սույն ենթակետում նշված տեղեկանքներում նշվում են պարտատիրոջ կամ պարտապանի անունը, ազգանունը կամ անվանումը, դիրքորոշումը, պահանջի (պարտավորության) տեսակը (հաշվեկշռային հոդվածը), ինչպես նաև պահանջի (պարտավորության) մնացորդը վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման մասին որոշման ընդունման օրվա վերջի դրությամբ: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել վարկային կազմակերպությունից ներկայացնել սույն ենթակետում նշված համաձայնությունը (դիրքորոշումը) հիմնավորող փաստաթղթերը: Կենտրոնական բանկի կողմից պահանջվելու դեպքում վարկային կազմակերպությունը կենտրոնական բանկ է ներկայացնում սույն ենթակետում նշված համաձայնությունը (դիրքորոշումը) հիմնավորող փաստաթղթերը՝ պահանջը ներկայացվելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում:

76.2. Սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագիրը պետք է լինի արժանահավատ, հիմնավորված կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով, ծրագրում կատարված կանխատեսումները պետք է լինեն իրատեսական, ծրագրում պետք է ճիշտ գնահատվեն վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման հետևանքով վարկային կազմակերպության առջև ծառացող ռիսկերը և դրանց կառավարումը. վարկային կազմակերպությունը, առաջնորդվելով սույն կետում նշված ծրագրով, պետք է ապահովի վարկային կազմակերպության տվյալ տիպի (խմբի) համար սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները:

76.3. Սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ծրագրի 1-ին բաժինը կարող է ներառել միայն սույն կանոնակարգի հավելված 19-ի 1-ին, 3-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը՝ վարկային կազմակերպությունների տիպի (խմբի) հետևյալ փոփոխությունների դեպքում.

1) ունիվերսալ վարկային կազմակերպությունները խնայողական միության, վարկային միության փոփոխվելու դեպքում,

2) ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպությունները խնայողական միության փոփոխվելու դեպքում,

3) վարկային միությունները խնայողական միության փոփոխվելու դեպքում:

Խնայողական միությունները, վարկային միությունները, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպությունները ունիվերսալ վարկային կազմակերպության փոփոխվելու դեպքում, խնայողական միությունները վարկային միության փոփոխվելու դեպքում, ունիվերսալ վարկային կազմակերպությունները ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպության, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող վարկային կազմակերպության փոփոխվելու դեպքում կարող են Կենտրոնական բանկ չներկայացնել սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները:

76.4. Սույն կանոնակարգի 76.1-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական բանկը մեկամսյա ժամկետում որոշում է կայացնում վարկային կազմակերպության կողմից ներկայացված միջնորդագրին համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու մասին, որի վերաբերյալ ծանուցում է վարկային կազմակերպությանը: Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով սույն կետում նշված մեկամսյա ժամկետը Կենտրոնական բանկի որոշմամբ կարող է կասեցվել, բայց ոչ ավել, քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով: Սույն կետում նշված մեկամսյա ժամկետում վարկային կազմակերպության միջնորդագրին համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու կամ միջնորդագրի քննության ժամկետը կասեցնելու վերաբերյալ չծանուցելու դեպքում միջնորդագրին՝ Կենտրոնական բանկի համաձայնությունը համարվում է տրված: Ընդ որում, Կենտրոնական բանկի կողմից միջնորդագրին տրված համաձայնությունն ուժի մեջ է մինչև կանոնադրության փոփոխությունները և սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու՝ վարկային կազմակերպության կողմից նշված վերջնաժամկետը, և մինչև այդ վերջնաժամկետը վարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում կենտրոնական բանկի համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

76.5. Այն դեպքում, երբ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով վարկային կազմակերպությունը նախատեսում է նոր նշանակալից մասնակիցների ներգրավում, ապա Կենտրոնական բանկի կողմից միջնորդագրին համաձայնություն տալը ենթադրում է նաև նշանակալից մասնակցությանը նախնական համաձայնության տրամադրում: Առանձին դեպքերում Կենտրոնական բանկը կարող է որոշել անձին և նրա հետ փոխկապակցված անձանց՝ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնություն տալ, նույ-

նիսկ, եթե Կենտրոնական բանկը մերժում է սույն կանոնակարգի 76.1-րդ նշված վարկային կազմակերպության կողմից ներկայացված վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու միջնորդագիրը:

76.6. Սույն կանոնակարգի 76.4-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու դեպքում վարկային կազմակերպությունն իրականացնում է ներկայացված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով սահմանված միջոցառումները և վարկային կազմակերպության տիպի (խմբի) լիցենզիայի վերաձևակերպման նպատակով ոչ ուշ, քան սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 4-րդ ենթակետում նշված վերջնաժամկետը, Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման նպատակով լիցենզիայի վերաձևակերպման դիմումը՝ համաձայն հավելված 20-ի,

2) սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նշված միջոցառումների իրականացումը հիմնավորող փաստաթղթերը՝ առկայության դեպքում (ակտիվների և/կամ պարտավորությունների փոխանցման պայմանագրերը կամ մարումը հիմնավորող փաստաթղթերը, վարկային կազմակերպության նոր կառուցվածքը և այլն),

3) ֆիրմային անվանման գրանցման հայտը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 16-ի, ինչպես նաև «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը,

4) վարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք՝ վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

5) վարկային կազմակերպության փոփոխված կանոնադրությունը (3 օրինակից): Եթե փոփոխությունը վերաբերում է վարկային կազմակերպության այն ներքին իրավական ակտերին, որոնց հղում է կատարած կանոնադրության մեջ, ապա կից ներկայացվում են նաև համապատասխան ակտերը: Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված, ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն սույն կարգի հավելված 4-ի,

6) վարկային կազմակերպության նոր ղեկավարներ կամ ղեկավարների կազմում փոփոխություններ գրանցելու նպատակով (առկայության դեպքում) սույն կանոնակարգի 50-րդ կետով պահանջվող փաստաթղթերը,

7) տեղեկանք վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին միջոցների առկայության վերաբերյալ, ինչպես նաև բաժնետոմսերի վերջին թողարկման հայտարարագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը (բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող վարկային կազմակերպության համար)՝ առկայության դեպքում,

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը (անդորրագրերը):

76.7. Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման նպատակով լիցենզիայի վերաձևակերպումն իրականացվում է Կենտրոնական բանկի որոշմամբ՝ վարկային կազմակերպության սույն կանոնակարգի 76.6-րդ կետում նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում: Կենտրոնական բանկը կարող է մերժել վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման լիցենզիայի տրամադրումը, եթե.

1) ներկայացվել են թերի, ակնհայտ կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ,

2) ներկայացված փաստաթղթերը հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին,

3) մերժվել է վարկային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը օրենքով սահմանված հիմքերով,

4) չեն կատարվել կամ թերի են կատարվել սույն կանոնակարգի 76.1-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով նշված միջոցառումները:

5) չեն պահպանվել սույն կանոնակարգի 8-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերով սահմանված պահանջները, իսկ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև 1-ին ենթակետով սահմանված պահանջը:»:

2. Կանոնակարգ 13-ը լրացնել 18, 19, 20 հավելվածներով՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

22 հուլիսի 2011 թ., N 189-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 189-Ն որոշմամբ

Կանոնակարգ 13-ի
Հավելված 18

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____-ին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԻՊԸ (ԽՈՒՄԲԸ) ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն _____

_____ վարկային կազմակերպության
(նշվում է վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը)

կառավարման բարձրագույն մարմինը (նշվում է մարմնի անվանումը) __/__/_____ թ. թիվ որոշմամբ որոշել է փոփոխել վարկային կազմակերպության տիպը (խումբը) և դիմել ՀՀ կենտրոնական բանկ՝

_____
(նշվում է վարկային կազմակերպության տիպը (խումբը))

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ գլխի 22.1-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված համաձայնությունը ստանալու նպատակով:

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ գլխի 22.1-րդ հոդվածը և ղեկավարվելով վերոնշյալ որոշմամբ՝ խնդրում եմ համաձայնություն տալ սույն միջնորդագրին և Կենտրոնական բանկ ներկայացված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման համար անհրաժեշտ փաստաթղթերին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում եմ վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման համաձայնությունը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ ___ էջ):

Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ վարկային կազմակերպության
(վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը)

գործադիր մարմնի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

_____/_____/20__ թ.

Կ.Տ.

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 189-Ն որոշմամբ

Կանոնակարգ 13-ի
Հավելված 19

Ծրագիր
վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու վերաբերյալ

Սույն ծրագիրը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելուն հաջորդող երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, վարկային կազմակերպության տնտեսական գործունեությունը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է:

Ծրագիրը բաղկացած է երկու բաժնից՝

Բաժին 1. Վարկային կազմակերպության տիպը (խումբը) փոփոխելու գործընթացը բացահայտող տեղեկություններ

Բաժին 2. Անհրաժեշտ միջոցառումներ

Ծրագրի 1-ին բաժնում նշվում են.

1) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման պատճառները և նպատակները,

2) վարկային կազմակերպության կողմից իրականացվելիք ֆինանսական գործառնությունների ցանկն ու նրանց նկարագրությունը (նոր, այդ թվում՝ նախատեսվող նոր վարկային ծրագրերը), նոր ֆինանսական ծառայությունների ներդրման ժամանակացույցը,

3) ֆինանսական այն շուկաների նկարագրությունը (նպատակային շուկաները), որոնցում վարկային կազմակերպությունը պատրաստվում է ծավալել իր գործունեությունը (մատուցել նոր ֆինանսական ծառայությունները կամ էապես ընդլայնել մատուցվող ծառայությունները), մասնավորապես՝ շուկաների տնտեսական բնութագիրը (նրա ծավալները, ոլորտի եկամտաբերությունը և այլն), հեռանկարային զարգացման միտումները, շուկաներում վարկային կազմակերպության գործարար ակտիվության կանխատեսումը, դրա որակական և քանակական գնահատումը, շուկայի տարածքային ընդգրկվածությունը,

4) նպատակային շուկայում վարկային կազմակերպության կողմից մատուցվելիք նոր կամ էականորեն ընդլայնվող ֆինանսական ծառայությունների և մարքեթինգային ռազմավարության համեմատությունը այդ շուկայում վարկային կազմակերպության հիմնական մրցակիցների հետ, նոր կամ էականորեն ընդլայնվող ֆինանսական ծառայությունների տեսանկյունից վարկային կազմակերպության հիմնական մրցակիցների նկատմամբ վարկային կազմակերպության հարաբերական առավելությունների և թերությունների նկարագրությունը (գնային քաղաքականություն, համբավ, շուկայի մասնաբաժին և այլն), վարկային կազմակերպության մրցունակության հիմնավորումը, մրցակցությանը դիմակայելու մեթոդների նկարագրությունը, նոր նպատակային շուկայում վարկային կազմակերպության պոտենցիալ մրցակիցների նկարագրությունը, նպատակային շուկան գրավելու համար անհրաժեշտ մարքեթինգային ծախսերի նկարագրությունը,

5) վարկային կազմակերպության վարկային պորտֆելի մոտավոր նկարագիրը (ըստ ճյուղային, ժամկետային, վարկերի տեսակների կառուցվածքը և այլն) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման լիցենզիան ստանալու օրվանից մեկ, երկու և երեք տարի հետո (այսուհետ՝ առաջիկա տարիներ),

6) նախատեսվող ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքն ըստ ժամկետայնության առաջիկա տարիներին, վարկային կազմակերպության իրացվելիության (ակտիվների և պասիվների կառավարման) ռազմավարության փոփոխության անհրաժեշտությունը,

7) նոր կամ էականորեն ընդլայնված ֆինանսական ծառայությունների մատուցման հետ առնչվող էական ռիսկերի (վարկային, արտարժութային, տոկոսադրույքի և այլ), ինչպես նաև վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման դեպքում առաջացող հնարավոր իրավական ռիսկերի նկարագրությունը և դրանց կառավարումը վարկային կազմակերպության կողմից,

8) ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, եկամուտների և ծախսերի կանխատեսումներն առաջիկա տարիների համար՝ համաձայն սույն Հավելվածի հավելված 1-ի,

9) վարկային կազմակերպության կարծիքով՝ էական նշանակություն ունեցող այլ տեղեկատվություն:

Ծրագրի 2-րդ բաժնում նշվում են.

1) վարկային կազմակերպության կապիտալի անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովման համար իրականացվելիք միջոցառումները, դրանց աղբյուրները, կատարման ժամկետները,

2) կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների տեղաբաշխման և գործառույթների մեջ ծրագրվող փոփոխությունները (առկայության դեպքում), նոր կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու դեպքում՝ ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների քանակը և աշխատավարձերը՝ ըստ հաստիքների,

3) այն հնարավոր բանկերի և (կամ) վարկային կազմակերպությունների անվանումները, որոնց հետ վարկային կազմակերպությունը նախատեսում է կնքել իր այն ակտիվների և պարտավորությունների փոխանցման գործարքները, որոնց գծով տեղաբաշխման կամ ստանձնման ֆինանսական գործառնությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, չեն թույլատրվում վարկային կազմակերպության կողմից նշված նոր տիպի (խմբի) համար, իսկ փոխանցման գործարքներ նախատեսված չլինելու դեպքում, սույն պարբերությունում նշված ակտիվների և պարտավորությունների մարման ժամանակացույցը և ձևերը (պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ մարում նախատեսելու դեպքում),

4) վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ժամանակահատվածում վարկային կազմակերպության կողմից ներդրվելիք տեխնոլոգիաները, եթե այդպիսիք ներդրվելու են,

5) ռիսկերի կառավարման ոլորտում վարկային կազմակերպության կողմից ծրագրված փոփոխությունները,

6) վարկային կազմակերպության աշխատակիցների վերապատրաստման ուղղությունները (առկայության դեպքում),

7) վարկային կազմակերպության կարծիքով էական նշանակության այլ միջոցառումներ,

8) առանձին նշում Կենտրոնական բանկի կողմից միջնորդագրի համաձայնության վերաբերյալ որոշման ընդունման դեպքում կանոնադրության փոփոխությունները և պահանջվող այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետի մասին:

Հավելված 1
Ձև 1

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ
(կանխատեսումը)

(հազար դրամ)

ԿԱՊԻՏԱԼ	Առաջիկա տարիներ		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Հիմնական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ հիմնական կապիտալ			
Լրացուցիչ կապիտալ			
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
Լրացուցիչ կապիտալի այլ տարրեր (նշել)։ «Լրացուցիչ կապիտալի այլ տարրերը» նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են ընդամենը լրացուցիչ կապիտալի գումարի կանխատեսված մեծության 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով։			
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ			
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ (հիմնական կապիտալ + լրացուցիչ կապիտալ)			
Որակական գնահատականներ			
1. Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև հարաբերակցությունը (%)			
2. Ընդհանուր կապիտալի և ներգրավված միջոցների միջև հարաբերակցությունը			

Ձև 2

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
(կանխատեսումներ)

(հազար դրամ)

	Առաջիկա տարիներ		
	1-ին	2-րդ	3-րդ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Կանխիկ դրամական միջոցներ, վճարային փաստաթղթեր և բանկային հաշիվներ			
Առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Վարկային ներդրումներ, այդ թվում՝			
Ֆինանսական վարձակալություն			
Ֆակտորինգ			
Սպառողական վարկեր			
Առևտրային վարկեր			
Գյուղատնտեսական վարկեր			
Հիփոթեքային վարկեր			
Այլ վարկային ներդրումներ։ «Այլ վարկային ներդրումների» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են վարկային ներդրումների կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով։			
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում			
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում			
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը և արժեզրկումը)			

Այլ ակտիվներ (նշել): «Այլ ակտիվների» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են ընդամենը ակտիվների գումարների կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			
Ընդամենը ակտիվներ			
ՊԱՍԻՎՆԵՐ			
Պարտավորություններ			
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններ և ստացված վարկեր			
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներ			
Պարտավորություններ այլ փոխատուների նկատմամբ			
Այլ վճարվելիք գումարներ (կրեդիտորական պարտքեր և այլն)			
Այլ պարտավորություններ (նշել): «Այլ պարտավորությունների» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են ընդամենը պարտավորությունների գումարների կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			

Հավ 3

Եկամուտների և ծախսերի նախահաշվարկներ
(կանխատեսումներ)

(հզ. դրամ)

		Առաջիկա տարիներ		
		1-ին	2-րդ	3-րդ
1.	Տոկոսային եկամուտներ	x	x	x
1.1.	Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից			
1.2.	Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.3.	Իրավաբանական անձանց և հիմնարկներին տրված վարկերից (փոխատվություններից)			
1.4.	Վարկային կազմակերպության հետ կապված անձանց մոտ տեղաբաշխված միջոցներից			
1.5.	Արժեթղթերում կատարված ներդրումներից ստացված տոկոսներ			
1.6.	Այլ տոկոսային եկամուտներ (նշել): «Այլ տոկոսային եկամուտների» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են տոկոսային եկամուտների գումարի կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			
	Ընդամենը տոկոսային եկամուտներ			
2.	Տոկոսային ծախսեր	x	x	x
2.1.	Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերի և փոխառությունների դիմաց			
2.3.	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց			
2.5.	Ստացված այլ փոխառությունների դիմաց			
2.7.	Տոկոսային ծախսեր վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի գծով			
2.9.	Ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.10.	Այլ տոկոսային ծախսեր (նշել): «Այլ տոկոսային ծախսերի» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են տոկոսային ծախսերի գումարի կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			
	Ընդամենը տոկոսային ծախս			
	Զուտ տոկոսային եկամուտներ			
3.	Ոչ տոկոսային եկամուտներ	x	x	x
3.1.	Ստացված միջնորդավճարներ			
3.5.	Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ			
3.6.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.9.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն			
3.10.	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ			
3.14.	Ստացված տույժեր, տուգանքներ			
3.15.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ (նշել): «Այլ ոչ տոկոսային եկամուտների» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են ոչ տոկոսային եկամուտների գումարի կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			
	Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ			

4.	Ոչ տոկոսային ծախսեր	x	x	x
4.1.	Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, հատկացումներ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամին			
4.2.	Գործուղման ծախսեր			
4.4.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ			
4.5.	Ամորտիզացիոն մասհանումներ			
4.6.	Շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար			
4.7.	Շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության ապահովման ծախսեր			
4.8.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր			
4.9.	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր			
4.10.	Գրասենյակային և տպագրական ծախսեր			
4.11.	Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
4.12.	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր			
4.13.	Ծառայությունների դիմաց ծախսեր (տրանսպորտային, կապի և հաղորդակցական միջոցների գծով և այլ ծախսեր)			
4.15	Վճարված տույժեր, տուգանքներ			
4.16.	Ուսուցման, վերապատրաստման ծախսեր			
4.17.	Ապահովագրության գծով ծախսեր			
4.18.	Այլ ոչ տոկոսային ծախսեր (նշել)՝ «Այլ ոչ տոկոսային ծախսերի» տարրերը նշվում են առանձին-առանձին միայն այն դեպքում, երբ դրանց գծով կանխատեսված գումարները գերազանցում են ոչ տոկոսային ծախսերի գումարի կանխատեսված մեծությունների 10%-ը, հակառակ դեպքում ներկայացվում են մեկ թվով:			
	Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր			
	Զուտ ոչ տոկոսային եկամուտներ			
5.	Զուտ հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	x	x	x
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին			
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին			
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին			
5.4.	Երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների պահուստին			
	Ընդամենը զուտ հատկացումներ			
	Շահույթ՝ մինչև հարկվելը			
	Շահութահարկ			
	Զուտ շահույթ			
	Հաշվարկված շահաբաժիններ			
	այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով			
	սովորական բաժնետոմսերի գծով			
	Չբաշխված շահույթ			

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 189-Ն որոշմամբ

Կանոնակարգ 13-ի
Հավելված 20

Վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման լիցենզիայի վերաձևակերպման դիմումի ձև

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____-ին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն _____

Հիմք ընդունելով __/__/_____ թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի թիվ ____ որոշմամբ՝ _____ վարկային կազմակերպության
(նշվում է վարկային կազմակերպության անվանումը)

տիպի (խմբի) փոփոխմանը տրված համաձայնությունը, ինչպես նաև __/__/_____ թ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկային կազմակերպության տիպի (խմբի) փոփոխման ծրագրով կատարված միջոցառումները, խնդրում ենք գրանցել վարկային կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և կատարել լիցենզիայի վերաձևակերպում:

Ես՝ ներքոստորագրյալս, հավաստիացնում եմ, որ մանրակրկիտ դիտարկել եմ սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական և գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ վարկային կազմակերպության
(վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը)

գործադիր մարմնի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

_____/_____/20__ թ.

Կ.Տ.

«Բանկերի միացման կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել բանկերի միացման գործընթացի ամբողջականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից այդ գործընթացի արդյունավետ վերահսկողությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, 68-րդ, 69-րդ հոդվածները, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի միացման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մարտի 19-ի «Բանկերի միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնության ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող միացման ծրագրում ընդգրկվող տեղեկությունների ցանկը» թիվ 68-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հուլիսի 2011 թ., N 190-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 190-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԲԱՆԿԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից միացման պայմանագրի կնքման նախնական հավանություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, միացման պայմանագրի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, հաստատված փոխանցման ակտի և պահպանվող բանկի կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունները և լրացումները գրանցելու համար այդ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը, ինչպես նաև միացման մասին հայտարարության հրապարակման կարգը:

2. Սույն Կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, բացառությամբ սույն Կարգի 2-րդ գլխով սահմանված ղեկավարների մասին տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հուլիսի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.2011 թ. (ՀՀԳՏ N21 (404), 1.09.2011):

կարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Ընդ որում, ղեկավարների մասին տեղեկությունները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն բանկի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Միացման պայմանագրի կնքմանը Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու նպատակով միացման մասին որոշման ընդունումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում միացող և պահպանվող բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) միացման նախնական հավանություն ստանալու վերաբերյալ դիմում՝ համաձայն Հավելված 1-ի,
2) միացման մասին միացող և պահպանվող բանկերի կառավարման իրավասու մարմինների որոշումները,
3) գործարքի էական պայմանները ներկայացվում են միացման պայմանագրի նախագծում ներառման միջոցով, որում ընդգրկվում են նաև հետևյալ տեղեկությունները.
   ա. միացող և պահպանվող բանկերի անվանումները և գրանցման տվյալները,
   բ. միացման կարգը, պայմաններն ու ժամկետները, միացող ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով),
   գ. միացող և պահպանվող բանկերի բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց շահութաբաժիններ (շահույթ) ստանալու կարգը և պայմանները,
   դ. համատեղ ժողովում քվեարկության և որոշումների ընդունման կարգը,
   ե. միացմանը մասնակցող բանկերի համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը,
   զ. կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
   է. դրույթ կողմերի պարտավորության մասին, համաձայն որի՝ կողմերը կապահովեն, որպեսզի պայմանագիրը Կենտրոնական բանկի հաստատմանը ներկայացնելու պահին առկա չլինեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը,
   ը. այլ տեղեկություններ՝ միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ:
4) Միացման արդյունքում պահպանվող բանկի առաջիկա երեք տարիների գործարար ծրագիրը, որը ներկայացվում է՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 1) սահմանված ենթահավելված 3-ի:
5) Պահպանվող բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու մասին նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի կամ այլ մասնակցություն ձեռք բերող անձի դիմումը և այլ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացվում են համաձայն Կանոնակարգ 1-ի:
6) Միացման հիմնավորումը, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.
   ա. միացման անհրաժեշտության ու նպատակի հիմնավորում,
   բ. պահպանվող բանկի կանխատեսումները, թե, արդյոք, միացման արդյունքում ձեռք չի բերում որևիցե ոլորտում գերիշխող դիրք (կոնկրետ հաշվարկներով),
   գ. հիմնավորում, որ նախատեսվող գործարքը կնպաստի ֆինանսական շուկայում տվյալ բանկի գործունեության զարգացմանը և հաճախորդների շահերի ոտնահարում տեղի չի ունենա (կոնկրետ հաշվարկներով):
7) Միացման մասին որոշման ընդունման օրվա դրությամբ միացող և պահպանվող բանկերի հաշվապահական հաշվեկշիռը, վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի, հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվական ձևերը՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի պահանջների:
8) Անկախ աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը՝ միացման պայմանագրի նախագծի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնա-

կան բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին միացման արդյունքում պահպանվող բանկի համապատասխանության մասին:

9) Փոխանցման ակտի նախագիծը:

10) Պահպանվող բանկի կանոնադրության փոփոխության դեպքում՝ պահպանվող բանկի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության նախագիծը կամ կանոնադրության լրացումների ու փոփոխությունների նախագիծը, պահպանվող բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը՝ սխեմատիկ տեսքով:

11) Միացման արդյունքում պահպանվող բանկի ղեկավարների փոփոխության դեպքում նոր ղեկավարների մասին Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ով պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե տվյալ ղեկավարի գրանցման համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, ապա այդ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

12) Կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի գլուխ 2-ով սահմանված տեղեկություններն այն անձանց մասին, որոնց կանոնադրական կապիտալում, միացման արդյունքում, պահպանվող բանկը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն, կամ մասնակացությունը մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում կկազմի 4.99 տոկոս և ավելի կամ իր ընդհանուր կապիտալի 15 տոկոսը գերազանցող մասնակցություն, կամ այլ անձանց կանոնադրական կապիտալներում բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը գերազանցող մասնակցություն:

13) Միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ այլ էական տեղեկություններ, որոնք կարտացոլեն միացման առանձնահատկությունները:

4. Կենտրոնական բանկը կարող է պահանջել այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են 3-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

5. Անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո բանկերի միացման նախնական հավանության վերաբերյալ որոշման կայացման (ընդունման) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

6. Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում միացող և պահպանվող բանկերը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից միացման պայմանագրի հաստատման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) միջնորդագիր՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի,

2) միացման պայմանագիրը՝ ստորագրված միացող և պահպանվող բանկերի գործադիր մարմնի ղեկավարի կողմից, որին կցվում է բանկերի մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումները կամ համապատասխան արձանագրություններից քաղվածքներ միացման պայմանագիրը հաստատելու մասին,

3) միացման պայմանագրի կնքման նախնական հավանություն ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացված սույն կարգի 3-րդ կետով (բացառությամբ 8-րդ ենթակետի) նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, եթե դրանցում տեղի են ունեցել փոփոխություններ:

7. Սույն Կարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում և գրանցում է միացման պայմանագիրը, եթե այն համապատասխանում է ստացված նախնական հավանության պայմաններին:

8. Միացման պայմանագիրը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց և գրանցվելուց հետո և միացման պայմանագրով սահմանված ժամկետներում միացման պայմանագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելուց հետո տասնօրյա ժամկետում միացման մասին որոշում ընդունած բանկերը Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում՝

1) միացման մասին որոշում ընդունած բանկերի հաստատած փոխանցման ակտը (որում պետք է նշվի, որ այն ուժի մեջ է մտնում Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից 10-րդ աշխատանքային օրը)՝ միացող և պահպանվող բանկերի իրավասու անձանց ստորագրություններով և ընկերությունների կնիքներով (առկայության դեպքում),

2) պահպանվող բանկի՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխություններն և լրացումները՝ համաձայն Կանոնակարգ 1-ի պահանջների,

3) ֆիրմային անվանման փոփոխության դեպքում գրանցման հայտը՝ համաձայն Կանոնակարգ 1-ի գլուխ 12-րդով սահմանված փաստաթղթերի,
4) պահպանվող բանկի ղեկավարների կազմում փոփոխության դեպքում Կանոնակարգ 1-ով ղեկավարների գրանցման համար պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե ղեկավարի գրանցման համար կամ սույն կարգի 3-րդ կետի 11-րդ ենթակետով և (կամ) 5-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 1-ի հավելված 1-ի ենթահավելված 4-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում բանկը դիմում է Կենտրոնական բանկ տվյալ անձին գրանցելու միջնորդությամբ, ապա ենթահավելված 4-ով սահմանված միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

9. Կենտրոնական բանկը միացող բանկերի փոխանցման ակտը հաստատելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուժը կորցրած է ճանաչում միացող բանկի լիցենզիան:

10. Եթե սույն կարգի 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելուց հետո ներկայացված փաստաթղթերում (տեղեկություններում) կատարվել են փոփոխություններ, ապա միացող և պահպանվող բանկերը պարտավոր են ներկայացնել նաև փոփոխված փաստաթղթերը (տեղեկությունները)՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար միացման պայմանագրի կնքմանը նախնական հավանություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու, միացման պայմանագիրը հաստատելու կամ հաստատումը մերժելու, կամ 8-րդ կետով սահմանված փաստաթղթերի (տեղեկությունների) գրանցման մասին որոշման կայացումը:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Միացող բանկերը Կենտրոնական բանկի կողմից միացման պայմանագրի կնքմանը նախնական հավանությունը ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում միացման մասին հայտարարությունը հրապարակում են իրենց կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով) և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

12. Միացող բանկը Կենտրոնական բանկի կողմից փոխանցման ակտը գրանցելու պահից եռօրյա ժամկետում միացման մասին պատվիրված նամակով ծանուցում է ուղարկում իր պարտապաններին և պարտատերերին՝ պայմանագրերում նշված հասցեներով:

13. Հայտարարության և ծանուցման մեջ պետք է առնվազն նշվեն միացող և պահպանվող բանկերի գործունեության վայրերը, հեռախոսահամարները, ինտերնետային կայքի հասցեները, էլեկտրոնային հասցեները, ինչպես նաև պայմանագիրը լուծելու հաճախորդի իրավունքը և այդ իրավունքի իրականացման ժամկետների և կարգի մասին տեղեկություններ:

Հավելված 1

«Բանկերի միացման կարգ» Հավելվածի

Դ Ի Մ ՈՒ Մ

(միացման նախնական հավանություն ստանալու)

Հարգելի _____

_____

Դիմողների անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գործունեության վայրը

Համաձայն միացող բանկի Ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ _____ որոշման և միացման արդյունքում պահպանվող բանկի Ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ _____ որոշման՝ դիմում ենք միացման նախնական հավանություն ստանալու համար:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի միացման կարգի»՝ կից ներկայացնում ենք միացման նախնական հավանություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք՝

_____

(պահպանվող բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 2

«Բանկերի միացման կարգ» Հավելվածի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(միացման պայմանագիրը հաստատելու)

Հարգելի _____

_____

Դիմողների անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գործունեության վայրը

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի միացման կարգի»՝ Ձեր հաստատմանն ենք ներկայացնում միացման պայմանագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք՝

_____

(պահպանվող բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող բանկի (բանկերի) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

«Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ը հաստատելու մասին[*]

Նպատակ հետապնդելով ապահովել ապահովագրական ընկերությունների միացման և վերակազմավորման ձևով վերակազմակերպման գործընթացի ամբողջականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից այդ գործընթացի արդյունավետ վերահսկողությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, 128-րդ հոդվածը, 130-րդ հոդվածի 2-րդ մասը, 5-րդ մասը, ինչպես նաև 132-րդ և 157-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հուլիսի 2011 թ., N 191-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 191-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/12

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը, ապահովագրական ընկերությունների միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնությունը ստանալու մասին հայտարարության հրապարակման կարգը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է նաև վերաապահովագրական ընկերությունների նկատմամբ, եթե կոնկրետ դրույթի էությունից չի բխում, որ այն վերաբերում է ապահովագրական ընկերություններին:

3. Ապահովագրական ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ապահովագրական ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

4. Ապահովագրական ընկերության վերակազմավորումն ընկերության կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունն է:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հուլիսի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.2011 թ. (ՀՀԳՏ N21 (404), 1.09.2011):

5. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխով սահմանված ղեկավարների մասին տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն էլեկտրոնային տարբերակով Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Ընդ որում, ղեկավարների մասին տեղեկությունները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ապահովագրական ընկերության իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Ապահովագրական ընկերությունները միացման պայմանագիր կնքելու համար ստանում են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

7. Միացման պայմանագրով միացող ապահովագրական ընկերության ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ապահովագրական ընկերության այլ պարտավորությունները, համաձայն փոխանցման ակտի, փոխանցվում են միացման արդյունքում պահպանվող ապահովագրական ընկերությանը: Պահպանվող ապահովագրական ընկերությունը դառնում է փոխանցված ապահովագրության (վերաապահովագրության) և այլ պայմանագրերի կողմ և կրում է օրենքով և պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

8. Միացման պայմանագրի կնքմանը Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու նպատակով միացման մասին որոշման ընդունումից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում միացող ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝
   ա. միացման նախնական համաձայնությունը ստանալու մասին դիմումը ներկայացվում է համաձայն Հավելված 1-ի,
   բ. գործարքի էական պայմանները ներկայացվում են սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված միացման պայմանագրի նախագծում ներառման միջոցով,
   գ. միացման արդյունքում պահպանվող ապահովագրական ընկերության առաջիկա երեք տարիների գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) Հավելված 9-ով սահմանված կարգով,
   դ. պահպանվող ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու մասին նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի դիմումը և այլ պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
2) միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների միջև կնքվող միացման պայմանագրի նախագիծը, որում ներառվում են՝
   ա. միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների անվանումները և գրանցման տվյալները,

բ. գործարքի էական պայմանները (միացման կարգը, պայմաններն ու ժամկետները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, միացող ապահովագրական ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով),

գ. միացող ապահովագրական ընկերությունների բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց շահութաբաժիններ (շահույթ) ստանալու կարգը և պայմանները,

դ. համատեղ ժողովում քվեարկության կարգը,

ե. միացմանը մասնակցող ապահովագրական ընկերությունների համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը,

է. դրույթ կողմերի պարտավորության մասին, համաձայն որի՝ կողմերը կապահովեն, որպեսզի միացման պայմանագիրը Կենտրոնական բանկի հաստատմանը ներկայացնելու պահին առկա չլինեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 130-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը,

3) միացման հիմնավորումը, որտեղ նշվում է միացման անհրաժեշտությունը և նպատակը,

4) միացման մասին որոշման ընդունման օրվա դրությամբ պահպանվող ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակը՝ հաշվեկշիռը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) Հավելված 1-ով սահմանված թիվ 1 հաշվետվության ձևի, տեխնիկական պահուստների մեծությունը՝ համաձայն Կանոնակարգ 3/04-ի Հավելված 15-ով սահմանված թիվ 15 հաշվետվության ձևի, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը՝ համաձայն Կանոնակարգ 3/04-ի Հավելված 9-ով սահմանված թիվ 3 հաշվետվության ձևի,

5) աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը՝ միացման պայմանագրի նախագծի մասին, պահպանվող ապահովագրական ընկերության միացման արդյունքում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության, տեխնիկական պահուստների համարժեքության մասին,

6) փոխանցման ակտի նախագիծը,

7) ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխության դեպքում՝ պահպանվող ապահովագրական ընկերության նոր կանոնադրության նախագիծը կամ կանոնադրության փոփոխությունների ու լրացումների նախագիծը, պահպանվող ապահովագրական ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքը,

8) միացման արդյունքում պահպանվող ապահովագրական ընկերության ղեկավարների փոփոխության դեպքում պահպանվող ապահովագրական ընկերությունը պետք է ներկայացնի ղեկավարների մասին տեղեկատվությունը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի Հավելված 3-ի: Եթե տվյալ ղեկավարի համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 3/01-ի Հավելված 3-ով սահմանված ողջ տեղեկատվությունը, ապա Հավելված 3-ով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն Հավելված 3-ի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

9) միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ այլ էական տեղեկություններ, որոնք կարտացոլեն միացման առանձնահատկությունները:

9. Կենտրոնական բանկը կարող է պահանջել միացման վերաբերյալ այլ տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար, եթե դրա հավաստիության ստուգումը Կենտրոնական բանկի կողմից հնարավոր չէ:

10. Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու պահից 30-օրյա ժամկետում, միացող ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկի խորհրդի կողմից միացման պայմանագրի հաստատման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,

2) միացման պայմանագիրը՝ ստորագրված միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարի կողմից, որին կցվում է ապահովագրական ընկերությունների ընդհանուր ժողովների որոշումները կամ համապատասխան արձանագրությունից քաղվածք միացման պայմանագիրը հաստատելու մասին,

3) միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 8-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները (բացառությամբ 5-րդ ենթակետի), եթե դրանցում տեղի են ունեցել փոփոխություններ:

11. Միացման պայմանագիրը հաստատելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է ընդունում միացող ապահովագրական ընկերության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

12. Միացման պայմանագիրը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց հետո տասնօրյա ժամկետում միացման մասին որոշում ընդունած ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում՝

1) միացման մասին որոշում ընդունած ապահովագրական ընկերությունների հաստատած փոխանցման ակտը՝ միացող և պահպանվող ապահովագրական ընկերությունների լիազորած անձանց ստորագրություններով և այդ ընկերությունների կնիքներով (առկայության դեպքում),
2) պահպանվող ապահովագրական ընկերության կանոնադրությունը կամ կանոնադրության լրացումները և փոփոխությունները՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
3) պահպանվող ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման փոփոխության դեպքում ֆիրմային անվանման փոփոխության գրանցման հայտը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
4) պահպանվող ապահովագրական ընկերության ղեկավարների կազմում փոփոխության դեպքում ղեկավարների գրանցման համար պահանջվող տեղեկությունները՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի: Եթե տվյալ ղեկավարի համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 3/01-ի Հավելված 3-ով սահմանված ողջ տեղեկատվությունը, ապա Հավելված 3-ով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն Հավելված 3-ի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

13. Միացման արդյունքում լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում սույն կանոնակարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին պահպանվող ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի վերաձևակերպման դիմումը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի:

14. Սույն կանոնակարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական բանկը 30-օրյա ժամկետում գրանցում է միացման մասին որոշում ընդունած ապահովագրական ընկերությունների հաստատած փոխանցման ակտը, պահպանվող ապահովագրական ընկերության կանոնադրությունը կամ կանոնադրության լրացումները և փոփոխությունները, պահպանվող ապահովագրական ընկերության ֆիրմային անվանման փոփոխության դեպքում ֆիրմային անվանման փոփոխությունը, ինչպես նաև ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները, եթե՝

1) միացման համար ներկայացված փաստաթղթերը և տեղեկատվությունը չեն հակասում օրենքներին կամ այլ իրավական ակտերին,
2) պահանջվող փաստաթղթերը և տեղեկատվությունը ներկայացվել են պատշաճ կարգով և ձևով կամ թերի չեն կամ դրանցում առկա չեն կեղծ, անարժանահավատ տվյալներ:

15. Կենտրոնական բանկը վերակազմակերպվող ապահովագրական ընկերության կանոնադրությունը կամ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները գրանցելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում միացված ընկերության գործունեության դադարման վերաբերյալ գրառում է կատարում ապահովագրական ընկերությունների գրանցման մատյանում:

16. Եթե սույն կանոնակարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ կամ 12-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելուց հետո ներկայացված փաստաթղթերում (տեղեկություններում) կատարվել են փոփոխություններ, ապա միացող ապահովագրական ընկերությունները ներկայացնում են նաև փոփոխված փաստաթղթերը (տեղեկությունները) մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու, միացման պայմանագիրը հաստատելու կամ հաստատումը մերժելու կամ 12-րդ կետով սահմանված փաստաթղթերի (տեղեկությունների) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշման կայացումը:

17. Որոշակի տեղեկություններ ստանալու համար Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ միացման նախնական համաձայնության, միացման պայմանագրի հաստատման, գրանցման դիմումների (միջնորդագրերի) քննության ժամկետները կարող են կասեցվել, ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրի քննության վերսկսման որոշման պահից ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և սույն կանոնակարգով սահմանված ժամկետների տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Միացող ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկի կողմից միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնությունն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում միացման մասին հայտարարությունը հրապարակում են իրենց ինտերնետային կայքերում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

19. Միացող ապահովագրական ընկերությունները Կենտրոնական բանկի կողմից միացման պայմանագիրը չհաստատվելու պահից՝ եռօրյա ժամկետում այդ մասին հայտարարությունը հրապարակում են իրենց ինտերնետային կայքերում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

20. Միացող ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից միացման պայմանագիրը հաստատելու պահից՝ հնգօրյա ժամկետում միացման մասին պատվիրված նամակով ծանուցում է ուղարկում ապահովադիրներին՝ ապահովագրության պայմանագրում նշված հասցեներով:

21. Հայտարարության և ծանուցման մեջ պետք է առնվազն նշվեն միացող ապահովագրական ընկերությունների գործունեության վայրերը, հեռախոսահամարները, ինտերնետային կայքի հասցեները, էլեկտրոնային հասցեները, ինչպես նաև ապահովագրության պայմանագիրը լուծելու՝ ապահովադրի իրավունքի և այդ իրավունքի իրականացման պայմանների, ժամկետների և կարգի մասին տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Ապահովագրական ընկերության վերակազմավորման դեպքում կազմակերպական-իրավական ձևը փոխած ապահովագրական ընկերությանն են անցնում վերակազմավորված ապահովագրական ընկերության իրավունքները և պարտականությունները:

23. Վերակազմավորվող ապահովագրական ընկերությունը գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) վերակազմավորման մասին միջնորդագիրը (համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի)՝ վերակազմավորվող ընկերության կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ և ապահովագրական ընկերության կնիքով (առկայության դեպքում),
2) վերակազմավորման մասին ընդհանուր ժողովի որոշումը,
3) վերակազմավորման արդյունքում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները և վերակազմավորման պայմանները,
4) վերակազմավորվող ապահովագրական ընկերության հիմնադիրների ժողովի հաստատած կանոնադրությունը կամ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
5) փոխանցման ակտը,
6) վերակազմավորվող ապահովագրական ընկերությունում անձանց կողմից նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում տեղեկություններ այդ անձանց մասին: Ընդ որում, վերակազմավորման միջնորդագրի հետ մեկտեղ վերակազմավորվող ապահովագրական ընկերությունը ներկայացնում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու մասին նշանակալից անձի դիմումը և այլ պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
7) ղեկավարների կազմում փոփոխությունների դեպքում՝ ղեկավարների մասին տեղեկատվությունը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
8) ֆիրմային անվանման փոփոխության գրանցման հայտը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի,
9) լիցենզիայի վերաձևակերպման դիմումը՝ համաձայն Կանոնակարգ 3/01-ի:

24. Կենտրոնական բանկը կարող է պահանջել վերակազմավորման վերաբերյալ այլ տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 23-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար, եթե դրա հավաստիության ստուգումը Կենտրոնական բանկի կողմից հնարավոր չէ:

25. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում գրանցում է վերակազմավորվող ապահովագրական ընկերությանը, եթե՝

1) վերակազմավորման համար ներկայացված փաստաթղթերը չեն հակասում օրենքներին կամ այլ իրավական ակտերին,
2) պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են պատշաճ կարգով և ձևով, թերի չեն կամ դրանցում առկա չեն կեղծ, անարժանահավատ տվյալներ:

26. Որոշակի տեղեկություններ ստանալու համար Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ միջնորդագրի քննության ժամկետը կարող է կասեցվել, սակայն ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրի քննության վերսկսման որոշման պահից ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և 30-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

27. Վերակազմավորվող ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից՝ եռօրյա ժամկետում վերակազմավորման մասին հայտարարությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում:

Հավելված 1

«Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը»
կանոնակարգ 3/12-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(միացման նախնական համաձայնություն ստանալու)

Հարգելի _____

_____

Դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը

Համաձայն Ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ _____ որոշման՝ դիմում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար:

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ի՝ կից ներկայացնում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը:

Առդիր՝_____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Դիմումը ներկայացնող անձինք՝

_____

(պահպանվող ապահովագրական ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող ապահովագրական ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 2

«Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը»
Կանոնակարգ 3/12-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(միացման պայմանագիրը և կից փաստաթղթերը հաստատելու)

Հարգելի _____

_____

Դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ի՝ միացման պայմանագիրը հաստատելու համար Ձեզ ենք ներկայացնում միացման պայմանագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Դիմումը ներկայացնող անձինք՝

_____

(պահպանվող ապահովագրական ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող ապահովագրական ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

__ _____ 20__ թ.

Հավելված 3

«Ապահովագրական ընկերության վերակազմակերպման կարգը»
Կանոնակարգ 3/12-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Վերակազմավորման

Հարգելի _____

_____

Դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 191-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման կարգը» կանոնակարգ 3/12-ի՝ ներկայացնում ենք վերակազմավորման միջնորդագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Դիմումը ներկայացնող անձ՝

_____

(վերակազմավորվող ապահովագրական ընկերության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

__ _____ 20__ թ.

«Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ընկերությունների միացման գործընթացի ամբողջականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից այդ գործընթացի արդյունավետ վերահսկողությունը,

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 87-րդ հոդվածի 1-ին մասը, 88-րդ հոդվածը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հուլիսի 2011 թ., N 192-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հուլիսի 19-ի
թիվ 192-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/14

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների կողմից միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնությունը ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, միացման պայմանագրի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, հաստատված փոխանցման ակտի և պահպանվող ներդրումային ընկերության կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունները և լրացումները գրանցելու համար այդ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը, ինչպես նաև միացման մասին հայտարարության հրապարակման կարգը:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբե-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. հուլիսի 19-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.2011 թ. (ՀՀՊՏ N21 (404), 1.09.2011):

րակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, բացառությամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխով սահմանված ղեկավարների մասին տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Ընդ որում, ղեկավարների մասին տեղեկությունները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ներդրումային ընկերության (ընկերությունների) իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն ստանալու նպատակով միացման մասին որոշման ընդունումից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում միացող և պահպանվող ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝
   ա. միացմանը նախնական համաձայնություն ստանալու մասին դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
   բ. գործարքի էական պայմանները ներկայացվում են սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված միացման պայմանագրի նախագծում ներառման միջոցով,
   գ. միացման արդյունքում պահպանվող ներդրումային ընկերության առաջիկա երեք տարիների գործարար ծրագիրը ներկայացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/01) հավելված 14-ի,
   դ. պահպանվող ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու մասին նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի դիմումը և այլ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացվում են՝ համաձայն Կանոնակարգ 4/01-ի:
2) միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների միջև կնքվող միացման պայմանագրի նախագիծը, որում ներառվում են.
   ա. միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների անվանումները և գրանցման տվյալները,
   բ. միացման կարգը, պայմանները և ժամկետները, միացող ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով,
   գ. միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց շահութաբաժիններ (շահույթ) ստանալու կարգը և պայմանները,
   դ. համատեղ ժողովում քվեարկության և որոշումների ընդունման կարգը,
   ե. միացմանը մասնակցող ընկերությունների համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը,
   զ. այլ տեղեկություններ՝ միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ,
   է. կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
   ը. դրույթ կողմերի պարտավորության մասին, համաձայն որի՝ կողմերը կապահովեն, որպեսզի պայմանագիրը Կենտրոնական բանկի հաստատմանը ներկայացնելու պահին առկա չլինեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը:
3) միացման հիմնավորումը, որտեղ նշվում են միացման անհրաժեշտությունը և նպատակը,
4) միացման մասին որոշման ընդունման օրվա դրությամբ միացող ներդրումային ընկերությունների հաշվեկշիռը և հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը և հաշվարկը՝ համաձայն Հա-

յաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի համապատասխանաբար թիվ 1 և թիվ 3 հաշվետվական ձևերի,

5) աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը՝ միացման պայմանագրի նախագծի մասին և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին միացման արդյունքում պահպանվող ներդրումային ընկերության համապատասխանության մասին,
6) փոխանցման ակտի նախագիծը,
7) պահպանվող ներդրումային ընկերության կանոնադրության փոփոխության դեպքում՝ պահպանվող ներդրումային ընկերության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության նախագիծը կամ կանոնադրության փոփոխությունների ու լրացումների նախագիծը, պահպանվող ներդրումային ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքը՝ սխեմատիկ տեսքով,
8) միացման արդյունքում պահպանվող ներդրումային ընկերության ղեկավարների փոփոխության դեպքում՝ նոր ղեկավարների մասին «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» Կանոնակարգ 4/05-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/05) Հավելված 2-ով պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե տվյալ ղեկավարի գրանցման կամ սույն կանոնակարգի համաձայն միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնության համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 4/05-ի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, ապա Հավելված 2-ով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն հավելված 2-ի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է,
9) միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ այլ էական տեղեկություններ, որոնք կարտացոլեն միացման առանձնահատկությունները:

4. Կենտրոնական բանկը կարող է պահանջել միացման վերաբերյալ այլ տեղեկատվություն սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

5. Միացման պայմանագրի կնքման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում, միացող և պահպանվող ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկի խորհրդի կողմից միացման պայմանագրի հաստատման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
2) միացման պայմանագիրը՝ ստորագրված միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարի կողմից, որին կցվում է ներդրումային ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումները կամ համապատասխան արձանագրություններից քաղվածքներ միացման պայմանագիրը հաստատելու վերաբերյալ:

6. Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 3-րդ կետով (բացառությամբ 5-րդ ենթակետի) նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, եթե դրանցում տեղի են ունեցել փոփոխություններ: Միացման պայմանագիրը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց և միացման պայմանագրով սահմանված ժամկետներում միացման պայմանագրով նախատեսված միջոցառումները իրականացնելուց հետո տասնօրյա ժամկետում միացման մասին որոշում ընդունած ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) միացման մասին որոշում ընդունած ներդրումային ընկերությունների հաստատած փոխանցման ակտը՝ միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների իրավասու անձանց ստորագրություններով և այդ ընկերությունների կնիքներով (առկայության դեպքում),
2) պահպանվող ներդրումային ընկերության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը կամ կանոնադրության լրացումները և փոփոխությունները՝ Կանոնակարգ 4/01-ով սահմանված կարգով,
3) պահպանվող ներդրումային ընկերության ֆիրմային անվանման փոփոխության դեպքում ֆիրմային անվանման փոփոխության գրանցման հայտը՝ համաձայն Կանոնակարգ 4/01-ի Հավելված 2դ-ի,
4) պահպանվող ներդրումային ընկերության ղեկավարների կազմում փոփոխության դեպքում Կանոնակարգ 4/05-ի 50-րդ կետով ղեկավարների գրանցման համար պահանջվող տեղեկությունները:

Ընդ որում, եթե ղեկավարի գրանցման համար կամ սույն կանոնակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետով և (կամ) 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 4/05-ի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում ներդրումային ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ տվյալ անձին գրանցելու միջնորդությամբ, ապա Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը Կանոնակարգ 4/05-ի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

7. Միացման արդյունքում լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին պահպանվող ներդրումային ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի վերաձևակերպման դիմումը՝ համաձայն Կանոնակարգ 4/01-ի:

8. Եթե սույն կանոնակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 6-րդ կետերով պահանջվող տեղեկությունները (փաստաթղթերը) ներկայացնելուց հետո ներկայացված տեղեկություններում (փաստաթղթերում) կատարվել են փոփոխություններ, ապա միացող ներդրումային ընկերությունները փոփոխված տեղեկությունները (փաստաթղթերը) Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան փոփոխությունները տեղի ունենալու մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու, միացման պայմանագիրը հաստատելու կամ հաստատումը մերժելու կամ 6-րդ կետով սահմանված տեղեկությունների (փաստաթղթերի) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշման կայացումը:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Միացման մասին հայտարարությունը հրապարակվում է ներդրումային ընկերության կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով):

10. Սույն կանոնակարգի 9-րդ կետի համաձայն՝ ներդրումային ընկերության կայքում, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մամուլում հրապարակման ենթակա միացման մասին հայտարարության մեջ առնվազն նշվում են միացող և պահպանվող ներդրումային ընկերությունների գործունեության վայրերը, հեռախոսահամարները, ինտերնետային կայքի հասցեները, էլեկտրոնային հասցեները, ինչպես նաև պայմանագիրը լուծելու՝ հաճախորդի իրավունքի և այդ իրավունքի իրականացման պայմանների, ժամկետների և կարգի մասին տեղեկություններ:

Հավելված 1

«Ներդրումային ընկերությունների միացման կարգը»
կանոնակարգ 4/14-ը Հավելվածի

Դ Ի Մ ՈՒ Մ

(միացման նախնական համաձայնություն ստանալու)

Հարգելի _____

_____

(դիմողի (դիմողների) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գործունեության վայրը)

Համաձայն միացող ներդրումային ընկերության ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ ____ որոշման և պահպանվող ներդրումային ընկերության ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ ____ որոշման՝ դիմում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19–ի թիվ 192-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ի՝ կից ներկայացնում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք՝ _____
(պահպանվող ներդրումային ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող ներդրումային ընկերության (ընկերությունների) իրավասու անձի (անձանց) անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

Հավելված 2

«Ներդրումային ընկերությունների միացման կարգը»
կանոնակարգ 4/14-ը Հավելվածի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(միացման պայմանագիրը հաստատելու)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գործունեության վայրը)

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 192-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների միացման կարգը» կանոնակարգ 4/14-ի՝ կից Ձեր հաստատմանն ենք ներկայացնում _____ որոշմամբ հաստատված միացման պայմանագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր՝ _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք՝ _____

(պահպանվող ներդրումային ընկերության իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող ներդրումային (ընկերությունների) իրավասու անձի (անձանց) անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011 թթ.)» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2011 թվականի սեպտեմբերի 14-ից շրջանառության մեջ դնել «Հայաստանի Հանրապետության 20-ամյակ (1991-2011թթ.)» հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզների հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 օգոստոսի 2011 թ., N 212-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 212-Ն որոշմամբ

